ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/137/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 17 հուլիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի հուլիսի 17-ին քննելով ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՎԻՎ/137/2025 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում, «infocom.am» լրատվական կայքի՝ «Մասիսի համայնքապետարանը 384 մլն դրամի պայմանագիր է կնքել ավագանու անդամի հոր ու եղբոր ընկերության հետ»

վերտառությամբ հրապարակման (https://infocom.am/hy/article/152683) հիման վրա իրականացրել է ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է.

1.2 Արմեփս (Armeps.am) գնումների համակարգում առկա տվյալների համաձայն՝ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանը, 2024 թվականի հուլիսի 24-ին և օգոստոսի 30-ին Արարատի մարզի Մասիս համայնքի կարիքների համար կնքել է ԱՄՄՀ-ՀՄԱԾՁԲ-24/81 և ԱՄՄՀ-ՄԱ-ԾՁԲ-24/96 ծածկագրերով պայմանագրերը «ԲԼՈՒՐ ՇԻՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) հետ, որի միակ մասնակիցը, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարը հանդիսացել է իր հետ փոխկապակցված անձ՝ նույն համայնքի ավագանու նույն խմբակցության անդամ Կարեն Արամայիսյանը:

1.3 Կարեն Արամայիսյանը պայմանագրի կնքման ժամանակ գործնական հարաբերությունների մեջ է գտնվել «ԲԼՈՒՐ ՇԻՆ» ՍՊ ընկերության հետ, լինելով Ընկերության միակ մասնակիցը, ինչպես նաև 2023 թվականի նոյեմբերի 2-ից զբաղեցնելով գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը:

1.4 Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ վերոնշյալ պայմանագրերը կնքելուց առաջ Դավիթ Համբարձումյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չեն ներկայացվել դրանց կնքման փաստի վերաբերյալ հայտարարություններ՝ այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

1.5 Հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՎԻՎ/137/2025 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

1.6 Հանձնաժողովը 2025 թվականի հուլիսի 3-ին Դավիթ Համբարձումյանին հասցեագրել է թիվ 01/2657-2025 գրությունը՝ կից ներկայացնելով թիվ ՎԻՎ/137/2025 Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը, միաժամանակ հրավիրելով անձամբ կամ ներկայացուցչի միջոցով 2025 թվականի հուլիսի 14-ին՝ ժամը՝ 15:00-ին մասնակցելու Օրենսգրքի 169.31-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ վարչական իրավախախտման հիմքով արձանագրության կազմմանը, ինչպես նաև 2025 թվականի հուլիսի 17-ին ժամը՝ 15:00-ին վերաբերելի նյութերի հիման վրա իրականացվող գործի քննությանը:

1.7 2025 թվականի հուլիսի 14-ին պատշաճ ծանուցված Դավիթ Համբարձումյանի ներկայացուցիչներ՝ Վոլոդյա Սահակյանի և Քոչար Խաչատրյանի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/118/25 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.8 2025 թվականի հուլիսի 17-ին, ժամը՝ 15:00-ին պատշաճ ծանուցված Դավիթ Համբարձումյանի և վերջինիս ներկայացուցիչների բացակայությամբ տեղի է ունեցել Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/137/2025 գործի քննությունը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2025 թվականի հուլիսի 14-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ Դավիթ Համբարձումյանի ներկայացուցիչների կողմից ներկայացվել է վերջինիս գրավոր դիրքորոշումը հետևյալ բովանդակությամբ.

«...Գտնում ենք, որ ենթադրյալ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով կայացված թիվ ՎԻՎ/137/2025 որոշումը (այսուհետ՝ Որոշում) ենթակա է կարճման՝ հետևյալ հիմնավորումներով և պատճառաբանությամբ.

1. Կոնկրետ գնման գործընթացները ուսումնասիրելիս պետք է նախ և առաջ դիտարկել պաշտոնատար անձի գործառույթների շրջանակը, դրանց ազդեցությունը կամ հնարավոր ազդեցությունը գնման ընթացակարգի արդյունքների վրա:

ՀՀ կառավարության 2027 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որորշմամբ հաստատված կարգի (այսուհետև՝ Կարգ) 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝ գնումները համակարգողը, պատասխանատու ստորաբաժանումը և գնահատող հանձնաժողովը: Համաձայն Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության՝ պատվիրատուի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմիններում համայնքի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետև՝ Կարգ) 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը՝ սահմանում գնումները համակարգող, պատասխանատու ստորաբաժանում, գնահատող հանձնաժողով՝ բացառությամբ նույն Կարգով նախատեսված դեպքերի, և նման գործընթացների կազմակերպման ժամանակացույցը: Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը կնքում է պայմանագիրը և հաստատում է գնման ընթացակարգի արձանագրությունը՝ բացառությամբ նույն Կարգով նախատեսված դեպքերի:

Ինչ վերաբերվում է գնման ընթացակարգի մասնակցին հաղթող (ընտրված) ճանաչելու որոշմանը, ապա դրա իրավասությունը բացառապես վերապահված է տվյալ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որի նախագահն ու անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի համաձայն գնում կատարվելու դեպքում, եթե գնահատող հանձնաժողով չի ձևավորվում, ապա գնահատող հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը, իսկ հանձնաժողովի քարտուղարինը՝ գնումները համակարգողը, որպիսի դեպքում նույն կերպ պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը և գնումները համակարգողը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, ինչպիսին որ կիրառվել է ինչպես Որոշմամբ նշված, այնպես էլ մյուս բոլոր ընթացակարգերի դեպքում:

Օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել գնահատող հանձնաժողովի աշխատանքներին, եթե հանձնաժողովի գործունեության ընթացքում պարզվում է, որ վերջիններիս հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ, ինչպես նաև ամրանու ծնող, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) կամ այդ անձի հիմնադրած կամ բաժնեմաս փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ

Համաձայն Օրենքի 33-րդ հովածի 7-րդ մասի՝ եթե առկա է նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պայմանը, ապա տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարն անհապաղ ինքնաբացարկ է

հայտնում: Հանձնաժողովի անդամները և քարտուղարն ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը պայմանագիր կնքելու մասին որոշման հետ հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

Մեջբերված իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ պատվիրատուի ղեկավարը գնման նշված ընթացակարգերի շրջանակներում օրենքով իրեն վերապահված գործառույթների իրացմամբ չէր կարող կատարել այնպիսի գործողություն (անգործություն) կամ ընդունել այնպիսի որոշում, որը որևէ արտոնություն կտար այն անձին, ում հետ կնքվել է ծառայությունների մատուցման գնման պայմանագիր: Գնումների մասին ՀՀ գործող օրենսդրությունը սպառիչ կերպով սահմանում է գնման գործընթացի պատասխանատուների գործառույթների շրջանակը, դրանց կատարման հերթականությունը, ժամկետները և այլն:

2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ..., իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իր կամ իր հետ

փոխկապակցված անձի մասնավոր շահերով առաջնորդվել չի համարվում այն դեպքը, երբ տվյալ գործողությունը (անգործությունը) կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտ է, որ որոշումը կամ գործողությունը (անգործությունը) ուղղված է ապահովելու արտոնություն պաշտոն զբաղեցնող անձի, նրա հետ փոխկապակցված անձի կամ վերջիններիս անդամակցած առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությունների համար:

Հանձնաժողովը՝ որպես ապացուցման բեռը կրող կողմ, Որոշմամբ չի ներկայացրել և հետևաբար չի հիմնավորել, թե պաշտոն զբացեցնող անձը տվյալ դեպքում համայնքի ղեկավարը, հաղթող/ընտրված/ մասնակցի համար ինչ արտոնություն է ապահովել, գնումների գործընթացի որ սկզբունքն է խախտվել, ինչ խտրականություն է սահմանվել և/կամ առավելություն տրվել: Ի վերջո գնումների մասին ՀՀ գործող օրենսդրության տեսանկյունից ընտրված մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որպիսի իրավասությունը բացառապես վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Ասվածից հետևում է, որ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը պետք է ներառի որևէ արտոնություն, և բացառապես արտոնության կամ ենթադրյալ արտոնության համատեքստում կարելի է դիտարկել իրավախախտման առկայությունը: Հետևաբար գտնում ենք, որ համայնքի ղեկավարի կողմից պայմանագրի ստորագրման պարտավորությունը չի կարող դիտարկվել որպես արտոնություն:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց: Թերևս սույն նորմի լայն մեկնաբանության պարագայում անգամ հնարավոր չէ այն համադրել գնման գործընթացում համայնքի ղեկավարի ունեցած լիազորություններին, մասնավորապես, ինչպես կարող է գնման

գործընթացում համայնքի ղեկավարը ձեռնպահ մնալ գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, երբ պայմանագիր հաստատելը վերջինիս պարտականությունն է, իսկ որոշում ընդունող մարմինը՝ գնահատող հանձնաժողովը:

3. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 5-ին մասի համաձայն՝ եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ելնելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի կարգավորման համատեքստից՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց որևէ արտոնության ապահովման բացակայությունը չի պարտավորեցնում վերջինիս գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4. Բացի այդ, Որոշմամբ ներկայացված պայմանագրերը կնքվել են գնման գործընթացների շրջանակներում, որոնք կազմակերպվել են Գնումների մասին օրենքի գործող օրենսդրության պահանջների կիրառմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք կարճել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ հարուցված գործի վարույթը:»

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/137/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի տվյալների համաձայն՝ Դավիթ Համբարձումյանը **2021 թվականի դեկտեմբերի 5-ին** ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու ընտրություններին մասնակցել և ավագանու անդամ է ընտրվել **«Դավիթ Համբարձումյան» դաշինքի ընտրացուցակով**: Ընտրությունների արդյունքներով Դավիթ Համբարձումյանն օրենքի ուժով համարվել է ընտրված համայնքի ղեկավար և 2021 թվականի դեկտեմբերի 20-ին ստանձնել է համայնքի ղեկավարի լիազորությունները: Մասիս համայնքի պաշտոնական կայքէջում առկա տեղեկության համաձայն՝ Դավիթ Համաբարձումյանը մինչ օրս զբաղեցնում է համայնքի ղեկավարի պաշտոնը (https://masiscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=b9c90178-02bc-4a0c-8af7-0db4b82f61cb)**:**

3.2 ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի պաշտոնական կայքէջում առկա տեղեկության, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի տվյալների համաձայն՝ Կարեն Արամայիսյանը **2021 թվականի դեկտեմբերի 5-ին** Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու ընտրություններին մասնակցել և ավագանու անդամ է ընտրվել **«Դավիթ Համբարձումյան» դաշինքի ընտրացուցակով և** մինչ օրս հանդիսանում է համայնքի ավագանու անդամ (https://masiscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=786eb1eb-09ad-47f2-a2a7-a7f5e329395a):

3.3 Պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի տվյալների համաձայն՝ «ԲԼՈՒՐ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 04230966) հիմնադրվել է 2018 թվականի փետրվարի 20-ին: Ընկերության միակ մասնակիցն է հանդիսանում ավագանու անդամ **Կարեն Գագիկի Արամայիսյանը, ով 2023 թվականի նոյեմբերի 2-ից զբաղեցնում է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը:**

Պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների փնտրման համակարգի համաձայն՝ «ԲԼՈՒՐ ՇԻՆ» ՍՊ ընկերությունն ունի գործող կարգավիճակ:

3.4 Արմեփս (Armeps.am) գնումների համակարգի տվյալների համաձայն ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանը, 2024 թվականի հուլիսի 24-ին և օգոստոսի 30-ին Արարատի մարզի Մասիս համայնքի կարիքների համար կնքել է ԱՄՄՀ-ՀՄԱԾՁԲ-24/81 և ԱՄՄՀ-ՄԱ-ԾՁԲ-24/96 ծածկագրերով պայմանագրերը «ԲԼՈՒՐ ՇԻՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) հետ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա: Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ համայնքի ղեկավարի պաշտոնը հանդիսանում է **համայնքային քաղաքական պաշտոն**:

4.2 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

4.3 Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար:

4.4 Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են՝

(...)

2) պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձինք, այդ թվում՝ համատեղ բնակվող անձինք, փաստացի խնամքի տակ գտնվող անձինք, ընդհանուր տնտեսական շահ ունեցող անձինք.

3) այն կազմակերպությունը, որին մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա պաշտոն զբաղեցնող անձը կամ նրա հետ փոխկապակցված անձը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին, կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպության կողմից իր հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ:

4.5 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից**, **ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց** կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

4.6 Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, **ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում** իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն **շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ:

4.7 Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

4.8 Նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունը ստանալն անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց** կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

4.9 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված է գնումների գործընթացի կազմակերպման կարգը (**այսուհետ՝ Կարգ**), որի 4-րդ կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում, 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը), 3) **պայմանագրի կնքում**, 4) պայմանագրի կատարում և կառավարում, Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը՝ **տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է**, Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ **պատվիրատուի ղեկավարը**, ի թիվս այլ գործառույթների, **կնքում է պայմանագիրը**:

4.10 «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և **շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը**:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.13 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.14 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.15 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.16 Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4.17 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Հանրային ծառայության մասին» օրենքով կարգավորվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից նույն օրենքով սահմանված դեպքերում շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն ներկայացնելուն առնչվող իրավահարաբերությունները:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է «շահերի բախման իրավիճակի» հասկացությունը, որի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթով բացահայտված է «Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը» բովանդակային սահմանները:

Վերոնշյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Օրենքով սահմանված իմպերատիվ պահանջներն ապահովում են պաշտոնատար անձի մասնավոր շահի ինչպես հնարավոր, այնպես էլ փաստացի ազդեցության չեզոքացումը

վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, որը կարող է դրսևորվել ինչպես որոշում կայացնելու, այնպես էլ գործողություն կատարելու արարքներում:

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին հայտարարություն ներկայացնելու պարագայում անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց՝ բացառություն սահմանելով միայն այն դեպքերի համար, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ:

Վերլուծելով Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումները՝ պարզ է դառնում, որ նշված իրավակարգավորմամբ նախատեսվում է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու պարտականություն, որը չկատարելու համար վարչական պատասխանատվություն է նախատեսված Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված դրույթով սահմանված զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է իրավասու մարմին հայտարարություն չներկայացնելու արարքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ որևէ ձևով դրսևորված փոխկապակցվածության հանգամանքի առկայությունն արդեն իսկ այն ազդակն է, որի պարագայում պաշտոնատար անձը, ում վերաբերելի են շահերի բախմանն առնչվող իրավակարգավորումները, մինչև որոշում ընդունելը կամ գործողություն կատարելը պարտավոր է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողովին գրավոր հայտարարություն ներկայացնել:

Սույն գործով ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանը Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, ուստի, վերջինիս նկատմամբ տարածվում են Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված շահերի բախմանը վերաբերող իրավակարգավորումները:

Սույն գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ Դավիթ Համբարձումյանը, առանց Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու, որպես պատվիրատուի ղեկավար (ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար) իր լիազորությունների շրջանակում համայնքի կարիքների համար գնման պայմանագրեր է կնքել Օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված (սերտ անձնական և գործնական հարաբերություններ ունեցող) անձի հետ գործնական հարաբերություններ ունեցող անձի՝ «ԲԼՈՒՐ ՇԻՆ» ՍՊ ընկերության հետ, որի միակ մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը հանդիսանում է Մասիս համայնքի ավագանու նույն խմբակցության անդամ Կարեն Արամայիսյանը: Վերոգրյալի արդյունքում տվյալ պայմանագրերի կնքմամբ Դավիթ Համբարձումյանը խախտել է Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը:

Անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշմանը, համաձայն որի՝ պայմանագրերը կնքվել են գնման գործընթացների շրջանակներում, որոնք կազմակերպվել են «Գնումների մասին» օրենքի գործող օրենսդրության պահանջների կիրառմամբ, իսկ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի կարգավորման համատեքստից հետևում է, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց որևէ արտոնության ապահովման բացակայությունը չի պարտավորեցնում վերջինիս գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ Հանձնաժողովն կարևոր է համարում անդրադառնալ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի իրավական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդիրը, սահմանելով շահերի բախման իրավիճակի իրավական բովանդակությունը, պաշտոն զբաղեցնող անձին կոչ է անում խուսափել շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնալ շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց: Այսինք շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելը կամ որոշում ընդունելը օրենսդիրը որակում է

որպես ոչ իրավաչափ վարքագիծ, որից պաշտոն զբաղեցնող անձն առհասարակ պետք է խուսափի:

Միաժամանակ նշված հոդվածի 5-րդ և 7-րդ մասերի իրավակարգավորումները նախատեսում են պաշտոն զբաղեցնող անձի գործունեության օրինականության և թափանցիկության ապահովման լրացուցիչ մեխանիզմ: Մասնավորապես, եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է **հանգեցնել շահերի բախման,** ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին: Կարևորելով հավանական կամ թվացյալ շահերի բախումը չեզոքացնելու, բացառելու համար պաշտոն զբաղեցնող անձի կողմից ձեռնարկվող գործողությունները և դրանց նկատմամբ հանրային ընկալումը, հաշվի առնելով պաշտոնական որոշումների/գործողությունների անաչառության նկատմամբ հանրային վստահությունը չվտանգելու կարևորությունը, Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանը չի ձեռնարկել Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված գործողությունը՝ չի ներկայացրել գրավոր հայտարարություն հնարավոր շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը խաթարել է համայնքի ղեկավարի կողմից կայացված որոշումների/կատարված գործողությունների նկատմամբ հանրային վստահությունը՝ հանգեցնելով սույն վարույթի հարուցմանը: ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի կողմից շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին հայտարարություն տալու դեպքում կբացառվեր հանրային կասկածը և անվստահությունը՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը:

Այսպիսով, սույն գործով առկա փաստերի համադրման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ Դավիթ Համբարձումյանի կողմից իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումն ապահովելու նպատակով չեն ձեռնարկվել օրենքով սահմանված համապատասխան գործողություններ շահերի բախման իրավիճակում չհայտնվելու կամ նման իրավիճակում հայտնվելու պարագայում օրենքով նախատեսված՝ կանխարգելման ընթացակարգերով առաջնորդվելու ուղղությամբ:

Վերոշարադրյալի արդյունքում, սույն գործով վարույթի մասնակցի կողմից խախտվել է Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու առնչությամբ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Հանձնաժողովը, անդրադառնալով վերոնշյալ իրավախախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցին, գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Վերոշարադրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դավիթ Համբարձումյանի կողմից կատարված արարքը հանգեցնում է օրենքով պահպանվող շահերի՝ սույն դեպքում «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրված՝ շահերի բախմանը վերաբերելի իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը՝ հաշվի առնելով այն, որ գնման պայմանագրերի կնքմամբ, պաշտոնատար անձը մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունն ստանալը, ըստ էության, ձեռնպահ չի մնացել գործողություն կատարելուց: Միաժամանակ, առկա չեն եղել նաև այն դեպքերը, երբ անհապաղ գործողություն կատարելը պայմանավորված է եղել անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ:

Այսպիսով, ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանն իր լիազորությունների շրջանակում վերոնշված գնման պայմանագրերի կնքմամբ կատարել է գործողություն, որն առերևույթ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով շահերի առկայության մասին գրավոր

հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ խախտելով օրենքով սահմանված շահերի բախմանը վերաբերելի իրավակարգավորումների պահանջը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ **300 000** (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դավիթ Համբարձումյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ